# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
<<ՏՄՆՊՔ-ՄԱ- ԾՁԲ-19/06>>

Ք. Նոյեմբերյան «08» «փետրվարի» 2019թ.

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ղազարյանի, որը գործում է կազմակերպության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Արսեն Գրիգորյան>> ԱՁ-ն (այսուհետև՝ Կատարող), մյուս կեղմից , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. *Պայմանագրի առարկան*

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի 2019թ. քարթրիջների լիցքավորում և վերանորոգում, անհրաժեշտության դեպքում վնասված և խափանված մասերի նորոգման կամ փոխարինում, ծրագրային սպասարկում, մասերի նորոգում կամ փոխարինում, ՕՁ-ի տեղադրում(ֆորմատավորում) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):

### 2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

*2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.1.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է նորմատիվներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 4.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.2 ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2.Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված տույժը:

2.3 **Կատարողը պարտավոր է՝**

2.3.3 Ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.3.4 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

*3. Պայմանագրի գինը*

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **<u>90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ</u>՝** **Պատճենահանող, տպիչ սարքավորումների վերանորոգման, խափանված մասերի նորոգման, փոխարինման համար՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Համակարգիչների ծրագրային սպասարկման, մասերի նորոգման, փոխարինման, ՕՀ-ի տեղադրման (ֆորմատավորում) համար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,, իսկ քարթրիջների լիցքավորման համար՝ 50000 (հիսուն հազար ) ՀՀ դրամ** :

3.2 Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու կամ կանխիկ ձևով դրամարկղից ստանալու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ծառայությունների ավարտից հետո 20 բանկային օրվա ընթացքում:

***4. Կողմերի պատասխանատվությունը***

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

4.2 Չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասին գնի նկատմամբ:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

4.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

***4.7 Սույն պայմանագրի կատարման ժամկետ սահմանվում է 2019թ. փետրվարի 8-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:***

***5 Անհաղթահարարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)***

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

## *6 Այլ պայմաններ*

6.1Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.4 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ
Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, Շիրազի 17
ՀՀ ֆինանսների նախարարություն
գործառնական վարչություն
Հ/Հ 900398000357
ՀՎՀՀ 07400783

ՏՆՕՐԵՆ՝ ________ Ա. Ղազարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արսեն Գրիգորյան>>ԱՁ
ՀՀ Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան
Անդրանիկի փողոց , տուն 18
Բանկ - ԱԿԲԱ <<Նոյեմբերյան>> մ/ճ
ՀՀ 2476804638710000
ՀՎՀՀ 82997815

*Տնօրեն՝ ________ Ա. Գրիգորյան*